ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2025 թվականի N 0997-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Արարատյան փողոց, 3/3 հասցեում քաղաքացի Հայկ Սերոժի Մանսուրյանի կողմից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող 28,8 քմ մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված սպասարկման օբյեկտը՝ 28,8 քմ արտաքին և 25,4 քմ ներքին մակերեսով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 16.06.2025թ. տրված թիվ 0737-Ա որոշմամբ ճանաչվել է Արմավիր համայնքի սեփականություն և օրինականացվել է: Քաղաքացի Հայկ Սերոժի Մանսուրյանի կողմից դիմում է ներկայացվել Արմավիրի համայնքապետարան նշված շինությունը (սպասարկման օբյեկտը՝ 28,8 քմ արտաքին և 25,4 քմ ներքին մակերեսով) զբաղեցրած և օգտագործման համար անհրաժեշտ 28,8 քմ մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով իրեն օտարելու մասին: Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35 կետի բ) ենթակետով, 35.1 և 36-րդ կետերով, հիմք ընդունելով քաղաքացի Հայկ Սերոժի Մանսուրյանի 22.08.2025թ. թիվ 4272 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Արարատյան փողոց, 3/3 հասցեում (04-001-0074-0093 կդաստրային ծածկագրով, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 23062025-04-0111 վկայական) գտնվող Հայկ Սերոժի Մանսուրյանի կողմից ինքնակամ կառուցված սպասարկման օբյեկտը՝ 28,8 քմ արտաքին և 25,4 քմ ներքին մակերեսով օտարել Հայկ Սերոժի Մանսուրյանին՝ շինությունը՝ ընդհանուր 28,8 քմ արտաքին մակերեսով, 1 քմ համար 17721 ՀՀ դրամ,ընդհանուր 510365 /հինգ հարյուր տասը հազար երեք հարյուր վաթսունհինգ / ՀՀ դրամ և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող 28,8 քմ մակերեսով հողամասն օտարել՝ հողամասի կադաստրային արժեքով՝1 քմ համար 4441.8 ՀՀ դրամ , ընդհանուր 127924/ մեկ հարյուր